ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1654-Ա

«20» սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄ ԱՍԱՏՐՅԱՆ 4Ա ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ՄԻՇԱ ՀԱԿՈԲԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Միշա Հակոբի Ասատրյանը գտնվում է սոցիալապես ծանր պայմաններում, ունի առողջական խնդիրներ և Վաղարշապատի համայնքապետարան է դիմել ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Անհրաժեշտությունից ելնելով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Վաղարշապատ համայնքի Արամ Ասատրյան 4ա տան բնակիչ Միշա Հակոբի Ասատրյանին հատկացնել 150000 դրամ դրամական օգնություն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1655

«22» սեպտեմբերի 2022թ. ք.էջմիածին

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ» ԵՎ «ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թ. մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի կողմից հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը կազմելու արձանագրությունները.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» և «Պատմազգագրական թանգարան» ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածների:

2.Սահմանել, որ «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» և «Պատմազգագրական թանգարան» ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթները անցկացվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26.03.2020 թ. N 02-Ն հրամանի համաձայն:

3.Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել համայնքապետարանի աշխատակազմի միջոցով: Մրցույթի նախապատրաստական աշխատանքները իրականացնելու համար անմիջական պատասխանատու նշանակել աշխատակազմի քարտուղար Գ. Հարությունյանին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
**Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի**
**Վաղարշապատ համայնքի ղեկավարի**
**22.09.2022 թ.**
**թիվ 1655 որոշմամբ**

**ԿԱԶՄ**
**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Մարիամ Փոթեյան**, Վաղարշապատի համայնքապետարանի կրթության և մշակույթի բաժնի առաջատար մասնագետ, աշխատակազմ.

Հանձնաժողովի անդամներ՝ **Սոնյա Բուդաղյան**, ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, մարզպետարան.

**Աշոտ Հովհաննիսյան**, ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ, մարզպետարան.

**Ավետիսյան Հրաչ**, համայնքի ավագանու անդամ.

**Լիաննա Բարբասովա**, Վաղարշապատի համայնքապետարանի իրավաբանական բաժնի պետի տեղակալ, աշխատակազմ.

**Հասմիկ Մելքոնյան**, «Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի տնօրեն, ՀՈԱԿ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1657-Ա

22 սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

### ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 18ա շենքի թիվ 17 բնակարանի բնակիչ Սնակ Սասունի Խաչատրյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան, իրեն սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 29.07.2022թ. տրված թիվ 29072022-04-0077 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.9064հա մակերեսով / ծածկագիր 04-002-1052-0017 / այլ հողատեսքին կից համայնքային սեփականություն հանդիսացող Սասունցի Դավթի թաղամասում գտնվող 0.2239հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նշանակության հողատեսքը, գործունեությունն ընդլայնելու նպատակով, ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այն արտաքին պարագծով պարփակված է ընդլայնվող հողամասով և հնարավոր չէ օտարել որպես առանձին գույքային միավոր:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ Կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի թաղամասում գտնվող 04-002-1052-0017 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.9064հա մակերեսով այլ հողատեսքին կից համայնքային սեփականություն հանդիսացող Սասունցի Դավթի թաղամասում գտնվող 0.2239հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը /ծածկագիր 04-002-1052-0011/, գործունեությունն ընդլայնելու նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Սնակ Սասունի Խաչատրյանին:
2. Սնակ Սասունի Խաչատրյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 12875 / տասներկու հազար ութ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ:
4. 04-002-1052-0017 ծածկագրով և ընդլայնման նպատակով հատկացված 04-002-1052-0011 ծածկագրով հողատեսքերը միավորել:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1658-Լ

«22» սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և ելնելով անհրաժեշտությունից.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Նվազեցնել՝
   1) Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <Կոմունալ ծառայություններ> հոդվածը /հոդ. 4213/ 22000.0 հազ. դրամ:
   2) Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <Վարչական սարքավորումներ> հոդվածը /հոդ. 5122/ 2000.0 հազ. դրամ:
   3) Նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածը /հոդ. 5113/ 9000.0 հազ. դրամ:
2. Ավելացնել՝
   1) Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 3000.0 հազ. դրամ:
   2) Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների /բաժին 01, խումբ 6, դաս 1/ <Այլ կապիտալ դրամաշնորհներ> հոդվածին /հոդ. 4657/ հոդվածը / 300.0 հազ. դրամ:
   3) Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում> հոդվածին /հոդ. 4251/ 20700.0 հազ. դրամ:
   4) Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <Գրասենյակային նյութեր և հագուստ> հոդվածին /հոդ. 4261/ 1000.0 հազ. դրամ և <Վարչական սարքավորումներ> հոդվածին /հոդ. 5122/ 1000.0 հազ. դրամ:
   5) Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածը /հոդ. 5113/ 3000.0 հազ. դրամ և <Տրանսպորտային սարքավորումներ> հոդվածը /հոդ. 5121/ 4000.0 հազ. դրամ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1659-Ա

23 սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

## ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացի փողոցի թիվ 24 շենքի թիվ 25 բնակարանի բնակիչ Ժիրայր Գալուստի Միքայելյանը՝ 0.002հա մակերեսով հողամաս կառուցապատման իրավունքով իրեն օգտագործման տրամադրելու խնդրանքով՝ տաղավար տեղադրելու համար:

Տվյալ հողամասը ընդգրկվում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48$^{1}$-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 08.05.2001թ. թիվ 286 որոշման և ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 22.08.2022թ. արտահերթ չորրորդ նիստի թիվ 128 որոշման պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացի փողոցի թիվ 24 շենքի թիվ 25 բնակարանի բնակիչ Ժիրայր Գալուստի Միքայելյանին կառուցապատման իրավունքով, տաղավար տեղադրելու համար, օգտագործման տրամադրել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 24/1 հասցեում գտնվող՝ 0.002հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը:
2. Հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրման ժամկետը սահմանել 10 /տասը/ տարի, իսկ վարձավճարը տարեկան 240000 /երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:
3. Ժիրայր Գալուստի Միքայելյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
4. Ոչ հիմնական շինության /տաղավարի/ տեղադրման աշխատանքները իրականացնել օրենքով սահմանված կարգով թույլտվություն ստանալուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1660-Ա

23 նոյեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 48/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն, համայնքի ղեկավարի 30.05.2022թ. թիվ 797Ա որոշումների առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Դանիել Գագիկի Ոսկանյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գ.Նարեկացու փողոցի թիվ 48/1 հասցեում գտնվող՝ 43.89քմ /43.89քմ արտաքին և 39.4քմ ներքին/ մակերեսով կիսակառույց շինությունը, պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0163հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դանիել Գագիկի Ոսկանյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գ.Նարեկացու փողոցի թիվ 48/1 հասցեում գտնվող՝ 43.89քմ /43.89քմ արտաքին և 39.4քմ ներքին/ մակերեսով կիսակառույց շինությունը, պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0163հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Դանիել Գագիկի Ոսկանյանը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 43.89քմ /43.89քմ արտաքին և 39.4քմ ներքին/ մակերեսով կիսակառույց շինության և պարսպի համար 86 420 / ութսունվեց հազար չորս հարյուր քսան / ՀՀ դրամ և 0.0163հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 724 014 / յոթ հարյուր քսանչորս հազար տասնչորս / ՀՀ դրամ:
3. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Դանիել Գագիկի Ոսկանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1661-Ա

23 սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

### ԳՈՒՐԳԵՆ ՍԱՐԳՍԻ, ԱՆԴՐԱՆԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ, ԱՆԱՀԻՏ ԳՈՒՐԳԵՆԻ, ԳԱՐԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ, ԱՍՏՂԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՈՆԱՐԱ ՄԱՆՎԵԼԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 20/ՏՈԿՈՍ/ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3-րդ ենթակետերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մայիսյան փողոցի թիվ 80 տան բնակիչ Գուրգեն Սարգսի Հովհաննիսյանի դիմումը իրեն, Դոնարա Մանվելի Վիրաբյանին, Անդրանիկ Գուրգենի, Անահիտ Գուրգենի, Գարիկ Գուրգենի և Աստղիկ Գուրգենի Հովհաննիսյաններին պատկանող /հիմք՝ <<Հայաստանի Ազգային Արխիվ>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 10.04.2020թ. տրված N Ամ-305 արխիվային տեղեկանքը, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 19.09.2022թ. տրված քաղվածքը, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 19.09.2022թ. տրված տեղեկանքը և <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի/ որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 17.03.2022թ. կատարված չափագրությունը/ <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագրեր՝ 04-002-0736-0006, 04-002-0737-0006, 04-002-0738-0007/ ընդհանուր 0.899հա գյուղատնտեսական նշանակության վարելահող /որից 0.319հա հաշվառվել է 04-002-0736-0006 ծածկագրում, 0.32հա հաշվառվել է 04-002-0737-0006 ծածկագրում և 0.26հա հաշվառվել է 04-002-0738-00017 ծածկագրում/ հողամասից ավել օգտագործվող 0.081հա ընդհանուր մակերեսով հողամասը իրենց հատկացնելու խնդրանքը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին պետական գրանցման աշխատանքների ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում ինչպես նաև չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և չի առաջացնում սերվիտուտ.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող 0.899հա ընհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասին կից ավել օգտագործվող ընդհանուր 0.081հա մակերեսով հողամասը ճանաչել Գուրգեն Սարգսի Հովհաննիսյանի, Դոնարա Մանվելի Վիրաբյանի, Անդրանիկ Գուրգենի, Անահիտ Գուրգենի, Գարիկ Գուրգենի և Աստղիկ Գուրգենի Հովհաննիսյանների սեփականությունը որից՝ 0.319հա /ծածկագիր՝ 04-002-0736-0006/ հողամասից ավել օգտագործվում է 0,0174հա մակերեսով հողամաս, 0.32հա /ծածկագիր՝ 04-002-0737-0006/ հողամասից ավել օգտագործվում է 0.0408հա մակերեսով հողամաս և 0.26հա /ծածկագիր՝ 04-002-0738-0007/ հողամասից ավել օգտագործվում է 0.0228հա մակերեսով հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1663-Ա

23 սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

## ԼԵՆԱ ՀՐԱՉԻ ԼՈՒՍԱՐԱՐՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ԺԻՐԱՅՐԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ,ՌՈՒԶԱՆՆԱ ԳԵՐԱՍԻՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ՀՐԱՉՅԱ ԿԱՐԵՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԵՎ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԵՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 20/ՏՈՒԿՈՍ/ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3-րդ ենթակետերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Երևան քաղաքի Մամիկոնյանց փողոցի թիվ 39 շենքի թիվ 20 բնակարանի բնակիչ՝ Կարեն Ժիրայրի Մինասյանի դիմումը իրեն, Լենա Հրաչի Լուսարարյանին, Ռուզաննա Գերասիմի Ավետիսյանին, Հրաչյա Կարենի Մինասյանին և Արթուր Կարենի Մինասյանին պատկանող /հիմք՝ <<Հայաստանի Ազգային Արխիվ>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 02.07.2021թ. տրված N Ամ-718 արխիվային քաղվածքը, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 19.09.2022թ. տրված քաղվածքը, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 19.09.2022թ. տրված տեղեկանքը, և <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի/ որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 10.10.2018թ. կատարված չափագրությունը/ հողամասից ավել օգտագործվող հողամասը իրենց հատկացնելու խնդրանքը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին պետական գրանցման աշխատանքների ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում ինչպես նաև չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և չի առաջացնում սերվիտուտ:

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝04-002-0213-0001/, 1.0հա գյուղատնտեսական նշանակության /վարելահող 3-րդ կարգի/ հողամասից ավել օգտագործվող 0,2հա մակերեսով հողամասը ճանաչել Կարեն Ժիրայրի Մինասյանի, Լենա Հրաչի Լուսարարյանի, Ռուզաննա Գերասիմի Ավետիսյանի, Հրաչյա Կարենի Մինասյանի և Արթուր Կարենի Մինասյանի սեփականությունը
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ 1663Ա

23 սեպտեմբերի 2022թ.  ք.Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Ուկրաինայի քաղաքացի Արտեմ Յուրիի Ղազարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0636-0003 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 2126971 տրված՝ 31.01.2006թ.և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 040025KA7UXL/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Չարենցի 1-ին թաղամաս թիվ 156 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1664-Ա

23 սեպտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով ՌԴ քաղաքացի Յռիփսիկ Կարապետի Խաչատրյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0023-0013 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ <<Հայաստանի Ազգային Արխիվ>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 08.09.2022թ. տրված թիվ Ամ-1409 արխիվային քաղվածքը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002QBFCA9X/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Չարենցի 1-ին թաղամաս թիվ 742 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1665Ա

23 սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 24/66 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն, համայնքի ղեկավարի 31.08.2022թ. թիվ 1505Ա որոշման առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Արման Լյովայի Վարդանյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 24/66 հասցեում գտնվող՝ 25.6քմ /25.6քմ արտաքին և 22.8քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00256հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Արման Լյովայի Վարդանյանը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 25.6քմ /25.6քմ արտաքին և 22.8քմ ներքին/ մակերեսով ավտոտնակի համար 59 290 / հիսունինը հազար երկու հարյուր իննսուն / ՀՀ դրամ և 0.00256հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 174 959 / հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր հիսունինը / ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արման Լյովայի Վարդանյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 24/66 հասցեում գտնվող՝ 25.6քմ /25.6քմ արտաքին և 22.8քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00256հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Արման Լյովայի Վարդանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1666-Ա

23 սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՋՐՈՒՑԱՐԱՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ն.Դարբինյան փողոցի թիվ 26ա տան բնակիչ Տիգրան Ստյոպայի Վարդիկյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, սեփականության իրավունքով պատկանող /հիմք 09.08.2022թ. տրված թիվ 09082022-04-0020 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 18.08.2022թ. կատարված չափագրությունը և Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022VZSWWV / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ն.Դարբինյան փողոցի թիվ 26/1 հասցեում գտնվող 0.0206հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 46.2քմ / 46.2քմ արտաքին, ներքին 40.1քմ/ մակերեսով կիսակառույց շինությունը, ջրուցարանը և պարիսպը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ն.Դարբինյան փողոցի թիվ 26/1 հասցեում գտնվող 0.0206հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 46.2քմ / 46.2քմ արտաքին, ներքին 40.1քմ/ մակերեսով կիսակառույց շինությունը, ջրուցարանը և պարիսպը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր 46.2քմ / 46.2քմ արտաքին, ներքին 40.1քմ/ մակերեսով կիսակառույց շինության, ջրուցարանի և պարսպի օրինականացման համար սահմանված 107 000 / հարյուր յոթ հազար / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1667-Ա

23 սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի, Հ.Ավետիսյան փողոցի թիվ 29 տան բնակիչ՝ Գևորգ Մարտունիկի Ներսիսյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0054-0042, 04-002-0054-0123 և 04-002-0054-0122 ծածկագրերով անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 09122020-04-0062 տրված՝ 09.12.2020թ., N 19092022-04-0079 տրված՝ 19.09.2022թ., N 19092022-04-0048 տրված՝ 19.09.2022թ., և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002WZ3P3QQ/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ծ.Իսակովի փողոց 1-ին փակուղի թիվ 12 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT REPUBLIC OF ARMENIA 04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1668-Ա

«26» սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

## ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԻՆԵ ԿԱՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 36-38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631 – Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գ. Նժդեհի 63/1 տուն հասցեի բնակիչ Ռուզաննա Վարդկեսի Գրիգորյանի 02.09.2022թ.-ի դիմումը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 07.09.2022թ. թիվ 21 նիստի արձանագրությունը, ուսումնասիրություններն ու փաստերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գ. Նժդեհի 63/1 տուն հասցեի բնակիչներ Արմեն Կարապետի Գրիգորյանի /ծնված՝ 26.07.1974թ., անձնագիր՝ AS 0674769/ և Արմինե Կարապետի Գրիգորյանի /ծնված՝ 04.02.1976թ., անձնագիր՝ AU 0595356/ նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով մորը՝ Ռուզաննա Վարդկեսի Գրիգորյանին /ծնված՝ 16.06.1995թ., անձնագիր՝ AU 0606942/:
2. Հսկողություն սահմանել Արմեն Կարապետի Գրիգորյանի /ծնված՝ 26.07.1974թ., անձնագիր՝ AS 0674769/ և Արմինե Կարապետի Գրիգորյանի /ծնված՝ 04.02.1976թ., անձնագիր՝ AU 0595356/ նկատմամբ խնամակալ նշանակված Ռուզաննա Վարդկեսի Գրիգորյանի /ծնված՝ 16.06.1995թ., անձնագիր՝ AU 0606942/ նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ 1663-Ա

27 սեպտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Վազգեն Առաջինի փողոցի 40 շենքի թիվ 43 բնակարանի բնակիչ՝ Գայանե Ազատի Մկրտչյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Վազգեն Առաջինի փողոցի 6 շենքի թիվ 31 և թիվ 32 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /հիմք՝ սեփականության իրավունքի վկայականներ 2732826 տրված 04.04.2011թ., 2802955 տրված 05.11.2010թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002UBCAJR5/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վազգեն Առաջինի փողոց 6 շենք թիվ 31-32 խանութ :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1670-Ա

27 սեպտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԵՆՐԻԿ ԳՆԵԼԻ ԵՍՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Իսակովի փողոցի 1-ին փակուղու թիվ 10 տան բնակիչ` Հենրիկ Գնելի Եսոյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն 14.11.1986թ. տրված տեխնիկական անձնագրի, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 15.09.2022թ. հաստատված թիվ 7143 սեղանամատյանով գրանցված փաստաթղթերի պատկանելիության վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին որոշման և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 18.04.2022թ. կատարված չափագրության, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Իսակովի փողոցի 1-ին փակուղու թիվ 10 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Հենրիկ Գնելի Եսոյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.083 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0013հա սահմանազատված հողամաս,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում կառուցված բնակելի նշանակության շինությունները և ավել օգտագործվող հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում` ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Իսակովի փողոցի 1-ին փակուղու թիվ 10 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.0013 հա մակերեսով հողամասը համարել Հենրիկ Գնելի Եսոյանի /ծնված 30.05.1942թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ 167-Ա

27 սեպտեմբերի 2022թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Նալբանդյան փողոցի թիվ 24ա տան բնակիչ՝ Խաչիկ Պետրոսի Պետրոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Նալբանդյան փողոցի թիվ 24ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 14022012-04-0005 տրված՝ 14.02.2012թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002FNYNVQK/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին Նալբանդյան փողոց թիվ 24/1 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ թԻՎ 1673-Ա

27 սեպտեմբերի 2022թ. ք.էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Աhարոն Բաբայանի լիազորված անձ՝ Վահրամ Յրաչյայի Բաբայանի դիմումը իր վստահորդին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 16092015-04-0017 տրված՝ 16.09.2015թ. և «Կարեն Մաչանյան» ԱՁ /վկայական թիվ 0244/ կողմից 01.09.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 0400227Z9EXM, 04002VNCSX5L/.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքում գտնվող, Սբ.Մ.Խորենացու փողոցի թիվ 26/50 հասցեում գտնվող խանութի 50,9 քմ մակերեսով բաժանված մասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. էջմիածին, Սբ.Մ.Խորենացու փողոց 26 շենք թիվ 50 խանութ, 252,3 քմ մակերեսով բաժանված մասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. էջմիածին, Սբ.Մ.Խորենացու փողոց 26 շենք թիվ 50/1 խանութ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ · МЭРИЯ ВАГАРШАПАТА · MUNICIPALITY OF VAGHARSHAPAT · 04440307

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ 1673Ա

27 սեպտեմբերի 2022թ. — ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Նալբանդյան փողոցի թիվ 24ա տան բնակիչ՝ Խաչիկ Պետրոսի Պետրոսյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Նալբանդյան փողոցի թիվ 24ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 14022012-04-0005 տրված՝ 14.02.2012թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002 / տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.էջմիածին Նալբանդյան փողոց թիվ 24/1 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ 1674Լ

27 սեպտեմբերի 2022թ. ք.էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Դ.Դակոբյան փողոցի 1-ին փակուղու թիվ 4 տան բնակիչ՝ Յուդիկ Արարատի Վարդանյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Թումանյան փողոցի թիվ 21ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 2852320 տրված՝ 16.11.2011թ., Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար՝ Վրեժ Ղարիբյանի կողմից 25.12.2015թ. հաստատված թիվ 6714 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002TDZ7JVS/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.էջմիածին, Դ.Թումանյան թիվ 21/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ 04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Թ Ի Վ 1675-Ա

27 սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԹԻՎ 5 <<ԳԱՐՈՒՆ>>, ԹԻՎ 6 <<ԱՐԵՎԻԿ>>, ԹԻՎ 10 <<ՇՈՒՇԱՆ>>, ԹԻՎ 11 <<ՀԱՍՄԻԿ>>, ԹԻՎ 13 <<ԾԻԾԵՌՆԱԿ>>, ԹԻՎ 14 <<ՁՆԾԱՂԻԿ>>, ԹԻՎ 15 <<ՁՎԱՐԹՆՈՑ>>, ԹԻՎ 16 <<ՈՍՏԱՆ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ - ՆԵՐ, Մ. ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1, Ս. ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ, Ե. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշմամբ, հիմք ընդունելով 2022թ. հունվարի 18-ի արտահերթ թիվ 3 նիստի 27 որոշումը <<Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2022թ. վարձավճարների>>,<<Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ում 2022թ. ուսման վարձերի գծով արտոնությունների մասին և 2022թ. հունվարի 18-ի արտահերթ թիվ 3 նիստի 28 որոշումը <<Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ներում 2022թ. ուսման վարձերի գծով արտոնությունների մասին>>, ինչպես նաև հաշվի առնելով Վաղարշապատի համայնքապետարանի սոցիալական աշխատակիցների ուսումնասիրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզներ, երաժշտական դպրոցներ և գեղարվեստի դպրոց հաճախող երեխաների խնամքի և ուսման վարձի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություններից օգտվող թվով 105 /հարյուր հինգ/ երեխաների ցանկը՝ համաձայն 22.09.2022թ. զեկուցագրին կից ներկայացված ցուցակի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1676-Լ

«27» սեպտեմբերի 2022թ. ք. Էջմիածին

## 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀՈՒՇԱՊՈՒՐԱԿՈՒՄ ԾԱՂԻԿՆԵՐ ԽՈՆԱՐՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով, որ 44-օրյա պատերազմում զոհված հերոսների հուշապուրակում սեպտեմբերի 27-ին հարգանքի տուրք մատուցելու և ծաղիկներ խոնարհելու նպատակով.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 15.0 հազ. դրամ փոխանցել ԱՁ Մանուկ Անդրեասյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ